Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԽԱՂԲԱԿՅԱՆՑ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

Բագրատունյաց թագավորության անկմամբ և Սելջուկյան արշավանքներով ցիր ու ցան եղան կամ վոչնչացան հայ իշխանական տոհմերը. ԺԱ. դարու կեսերից սկսած մինչև ԺԲ-ի վերջին քառորդը համարյա վոչինչ նշանավոր բան չենք լսում նրանց մասին բուն Հայաստանում. Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունյաց ճեացորդներն այնքան աննշան եյին, վոր քաղաքական կարևոր դեր կատարել չեյին կարող։ Զյիշենք ավելի յերկրորդական տոհմերը, վորոնք իրենց գոյությունը միայն պահում եյին Արցախի և Գուգարաց լեռներում և Մամիկոնյանց ճեացորդները Սասնո փոքրիկ իշխանության մեջ. կային և Պահլավունյաց ճեացորդներ Շիրակում կամ Անիում։

Բայց Սելջուկյան միահեծան պետության տևողությունն ել յերկար չտևեց. ԺԲ. դարու առաջին քառորդից արդեն սկսվում է նորա քայքայման շրջանը. ներքին յերկպառակություններն ու պատերազմները թուլացնում յեն այս ահարկու պետության հիմքերը. Բարքիարուքի (Բեկի—Արուխ), Մուհամմեդի * և նորա եղբոր Սինջարի պայքարները նրանով վերջացան, վոր 1104թ. Մուհամմեդին բաժին ընկավ բացի Ատրպատականից և արևելյան Հայաստանից, վոր յուրն եր արդեն, նաև Ասորիքն ու Միջագետքը և արևմտյան Իրանը։ Նա վերջին զորեղ սուլթանն եր, վորի մահվանից հետո († 1118 թ.) ներքին յերկպառակություններն ավելի զորեղ կերպով գլուխ բարձրացրին նրա յերեք վորդոց ժամանակ, երբ եմիրները անկախ կամ կիսանկախ իշխանություններ դարձան ի վնաս կեդրոնական իշխանության**։ Հայաստանում դեռ ևս Մուհամմեդի փոխարքա յեղած ժամանակ Գանձակը դարձել եր Առանի, ինչպես կոչում եյին այդ ժամանակ Աղվանից աշխարհը, կեդրոնական քաղաքը և կարևոր դեր եր կատարում հետագայում ևս յուր արքայազուն իշխաններով. բայց մյուս քաղաքներն ու գավառներն ել ունեյին իրենց եմիրները, ինչպես Անին, Դվինը, Կարսը, Խլաթը, Կարինը ևն, մեկը մյուսից անկախ և շատ հաճախ իրար հետ մրցող իշխանություններ, ինչպես և յերբեմն յերկրի ընիկ տերերն եյին։ Հիշատակելի են հատկապես Անիի Մանուչյանք (1072—1199), Ատրպատականի աթաբեգներն (1136—1225) ու Խլաթի Շահիարմենները (1100—1206/7), վորոնք մի մի դարու չափ իշխեցին իրենց յերկիրներում վորդոց վորդի * և Հայաստանի բազդի վերա իրենց ազդեցությունն ունեցան. 1207 թ. հետո Խլաթը Սուլթանի հաջորդների ձեռքից անցնում է Եյուբյաններին։

Սելջուկների հարվածը համեմատաբար ավելի թույլ եր եղած Վրաստանում, ուստի և այստեղ ավելի վաղ պիտի զարթներ անկոչ հյուրերից յերկիրն ազատելու ձգտումը։ Ընդհարման առիթը տվավ Գանձակի Խազի կամ Ելիսազի ամիրան, վոր 1121 թվին հարձակվեց Վրաստանի վերա. Դավիթ Ա. վոչ միայն յետ մղեց այս հարձակումը, այլ և Տփխիսի սահմաններում մեծ ջարդ տվեց Մելիք Սուլթանին, վոր յեկել եր Խազի ամիրայի վրեժն առնելու։ Սկիզբն եր այս մի շարք հաջողությանց. ազատված եր վոչ միայն Տփխիսը, վոր յերկար դարեր հեծել եր մահմեդական լծի տակ, այլ և դրացի Հայաստանի մի քանի գավառները Անի մայրաքաղաքով, ուր կուսակալ նշանակվեց Որբելյան ցեղից Աբուլեթը Իվանե վորդու հետ**։ Անիի առման մեծ չափով ոժանդակ հանդիսացան հայ բնակիչները. հայ իշխանական տոհմերի ճեացորդներն ել խմբվեցան Դավթի և նորա վորդի Դեմետրեյի շուրջը, վոր ըստ Ուռհայեցու հայ կնոջ զավակ եր. թեպետ Փատլունը կրկին յետ ստացավ Անին, բայց Սելջուկյան զենքի թափն արդեն կոտրված եր, և նոքա ստիպված եյին ավելի մեղմ վարվել բնակիչների հետ։ Դեմետրեյի վորդին Գեորգի Գ. 1161/2 թվին Փատլունի և հատ-

* Ուռհայեցին (Վաղարշապատ. 1898, եր. 298, 330, 341) և Վարդան (Մոսկվա. 1861, եր. 149, 155) Տափար են անվանում Մուհամմեդին։

** A. Müller. Der Islam in Morgen nnd Abendland. II. 120. А. Мюллер, Исторія Ислама. СП. 1896. Т. III. եր. 127—147։ Ժամանակը լաւ ընորոշում է Որբելյան. Ղուկ. հրատ. յեր. 319. 333։

* Ուռհայեցի եր. 341/2. 348. 359 365. Ուռհայեցի—Գրիգոր յերեց. 425.—Սամուել Անեցի. Վաղարշապատ։ 1883. եր. 118. 132 125.—Գանձակեցի. Թիֆլիս. 1909. եր. 169. 171. 154. 155/6. Վարդան. 145. 156. 161/2. Որբ. 393. Ալիշան. Շիրակ. 98.—Стэнли Лен—Пуль. Мусульманскія Династіи. перев. Бартольда, СП. 1899 եր. 143—144. Brosset. Histoire de la Georgie. S. Petersbourg. 1849 p. 367. 370.

** Ուռհայեցի. 348—350, 356. 359. Սամուել Անեցի 125.—Վարդան 156։